2. «Նորարար փորձառական արվեստի կենտրոն հիմնադրամ» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպման ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՅ

Ս. ՏԵՐ-ՍԻՍՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 385 - Ա  
քաղ. երևան


ՍԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՎՃՆԻ ՀԱՍՑԵՈՎ ԱՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ  
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-2/3937-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 16-ի N 18328/3-6 եզրակացությունները, ո Ր Ո Շ ՈՒ Մ է.*

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության ֆինանսավորմամբ Միացյալ Արաբական էմիրությունից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ (ներկեր, լամպեր, գրանիտե սալիկներ՝ 1.528 տեղ, 34860 կգ ընդհանուր քաշով, 124277 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՍ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ «Սուրբ Ներսես Մեծ» ԳՀԿ-ի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպման և բաշխման աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ – ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 384 - Ա  
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱՅՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ  
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-2/3932-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 10-ի N 17717/3-6 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Նոր Նախիջևանի և Ռուսաստանի Հայոց Թեմի միջոցներով Ռուսաստանի Դաշնությունից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ (երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի արծանը՝ 1 տեղ, 1000 կգ ընդհանուր քաշով, 192800 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 15647 ռուսական ռուբլուն համարժեք դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռի միաբանական շենքին հարակից այգում կանգնեցնելու համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպման և բաշխման աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ – ՍԻՄՈՆՅԱՆ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 383-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի  
N Մ-029-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ԵՎ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՈՒՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Արմենակ և Աննա Թադևոսեանների անվամբ բուժարան»)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 3-ի N3/3.8-2/3658-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 16-ի N 18326/3-6 եզրակացությունները, ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի «Արմենակ և Աննա Թադևոսեանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոչ գյուղում պոլիկլինիկայի կառուցման» ծրագրի մասին» N Մ-029-Ա որոշման կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետում «Շինարարություն և տարածքի բարեկարգում 623700000 դրամ» բառերը փոխարինել «Շինարարություն, ամրանի ներմուծում, շինարարական նյութերի ներմուծում և տարածքի բարեկարգում 623700000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Միկմետալ» ՓԲԸ-ի պատվերով Ուկրաինայից «Արմենակ և Աննա Թադևոսեանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի հասցեով (ՀՎՀՀ՝ 02592526) ստացված ամրանները (70000 կգ ընդհանուր քաշով, 22584800 դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, Արարատյան ՏՍ) ներմուծվել են սույն որոշման 1-ի կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՅ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 382 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի  
N Մ-571-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ  
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-1/3942-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 8-ի N 17543/3-4 եզրակացությունները և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2010 թվականի մայիսի 27-ի N 889 գրությունը, որ ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 14-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գևորգյան հոգևոր ճեմարանի 2-րդ մասնաշենքի կառուցում» N Մ-571-Ա որոշման (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-832-Ա որոշման խմբագրությամբ) մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետերում «489,324,120 դրամ» բառերը փոխարինել «500,604,120 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557589) 2010 թվականի ապրիլի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2010 թվականի արտադրության «Toyota Camry 2.4 L Gas» մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 11280000 դրամի չափով՝ (առանց ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքի և մաքսավճարի):

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՅ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ *381* - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ  
30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Մատենադարան» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 1-ի N 3/3.8-2/3595-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 4-ի N 17138/3-6 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից ձեռք բերված շինարարական ապրանքները (604 տեղ, 29850 կգ ընդհանուր քաշով, 77340.24 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 8100 եվրո փոխադրման, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 380 - Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ-  
ԹՅԱՆ «ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԱՍԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2010 թվականի հունիսի 15-ի N 3/3.8-2/4065-10 և Հայաստանի Հանրապե-  
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի  
հունիսի 14-ի N 18002/3-6 եզրակացությունները, որոշում է.*

1. Բարեգործական որակել Սիացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնա-  
դրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-  
թյան «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական  
ընկերության հասցեով Ազգային ինունականխարգելման ծրագրի շրջանակներում երեխանե-  
րի անվճար պատվաստման նպատակով ուղարկված պատվաստանյութի (28 տեղ, 1281 կգ  
ընդհանուր քաշով, 385565 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման  
ծախսերը կազմել են 5344.78 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդու-  
թյունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝  
նշված բեռը համապատասխան բուժփիմնարկներին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝  
սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և  
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների  
կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 379 - Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ-  
ԹՅԱՆ «ՀԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2010 թվականի հունիսի 15-ի N 3/3.8-2/4067-10 և Հայաստանի Հանրապե-  
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի  
հունիսի 14-ի N 18003/3-6 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի Սիացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնա-  
դրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-  
թյան «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական  
ընկերության հասցեով Ազգային իմունակամխարգելման ծրագրի շրջանակներում երեխանե-  
րի անվճար պատվաստման նպատակով ուղարկված 6500 սրվակ «ԱԿԴՓ» պատվաստա-  
նյութի (6 տեղ, 236 կգ ընդհանուր քաշով, 26000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով,  
փոխադրման ծախսերը կազմել են 1890.64 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման  
ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդու-  
թյունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝  
նշված բեռը համապատասխան բուժփիմնարկներին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝  
սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և  
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների  
կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 378 - Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ-  
ԹՅԱՆ «ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2010 թվականի հունիսի 15-ի N 3/3.8-2/4064-10 և Հայաստանի Հանրապե-  
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի  
հունիսի 14-ի N 18004/3-6 եզրակացությունները, որ ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել Սիացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնա-  
դրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-  
թյան «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական  
ընկերության հասցեով Ազգային ինունականխարգելման ծրագրի շրջանակներում երեխանե-  
րի անվճար պատվաստման նպատակով ուղարկված 8300 սրվակ «ԿԿԽ» պատվաստանյութի  
(իր լուծիչով՝ 12 տեղ, 326 կգ ընդհանուր քաշով, 132800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ  
արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2874.67 ԱՄՆ-ի դոլար, «Ձվարթնոց» ՍՏ)  
ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդու-  
թյունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝  
նշված բեռը համապատասխան բուժփիմնարկներին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝  
սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և  
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների  
կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 377-Ա  
քաղ. երևան


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ-  
ԹՅԱՆ «ՀԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՍՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2010 թվականի հունիսի 15-ի N 3/3.8-2/4066-10 և Հայաստանի Հանրապե-  
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի  
հունիսի 14-ի N 18005/3-6 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Ռոստրոպովիչ – Վիշնևսկայա» հիմնադրամի կողմից  
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների  
վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով  
Ազգային ինունականխարգելման ծրագրի շրջանակներում ստաված ախտորոշիչ թեստերի  
(17 տեղ, 218.5 կգ ընդհանուր քաշով, 12675 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր  
արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդու-  
թյունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝  
նշված բեռը համապատասխան բուժփիմնարկներին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝  
սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և  
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների  
կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Ս - 376 - Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ-  
ԹՅԱՆ «ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՅՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 5)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2010 թվականի հունիսի 15-ի N 3/3.8-2/4068-10 և Հայաստանի Հանրապե-  
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի  
հունիսի 14-ի N 18006/3-6 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Սիացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնա-  
դրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-  
թյան «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական  
ընկերության հասցեով Ազգային ինոնականիսարգելման ծրագրի շրջանակներում երեխանե-  
րի անվճար պատվաստման նպատակով ուղարկված 6500 սրվակ «ԲՑԺ» պատվաստա-  
նյութի՝ իր լուծիչով և 26500 սրվակ «ԱԴՓ-Ս» պատվաստանյութի (18 տեղ, 650 կգ ընդհանուր  
քաշով, 29440 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են  
2856.45 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդու-  
թյունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝  
նշված բեռը համապատասխան բուժփիմնարկներին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝  
սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և  
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների  
կոմիտե:



*Handwritten signature*

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 375 - Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՍՈՒՇՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 15-ի N 3/3.8-2/4062-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 14-ի N 18001/3-6 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել ԱՊՀ մասնակից երկրների մարդասիրական համագործակցության միջազգային հիմնադրամի կողմից Հայրենական Մեծ պատերազմի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հասցեով ուղարկված բեռի՝ 25 լրակազմ նվերների՝ գրքեր և DVD սկավառակների փաթեթների (1 տեղ, 25 կգ քաշով, 3 ԱՄՆ-ի դոլարին համարժեք ՀՀ դրամ արժեքով, փոխադրման ծախսերը 217 ԱՄՆ-ի դոլար, ՍՓ ՍԱՓԱՄ Ս/Տ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ նշված բեռը բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա. ՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 374 - Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի  
N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N 1)

(«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 9-ի N 3/3.8-2/3809-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի հունիսի 10-ի N 12/8-22-4194 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 8-ի N 17535/3-6 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ Բելգիայից՝ «ՆԱՖ» ասոցիացիայի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բժշկական պարագաները և դեղորայքը (2 տեղ, 19.4 կգ ընդհանուր քաշով, 15517.50 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 207.06 եվրո, «ՄՓԵՎՍԱՓԱՍ» ՍՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առաջնային պահպանմանը և բժշկասոցիալական ծրագրերի զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ-373-Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի  
N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N 2)

(«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 9-ի N 3/3.8-2/3811-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի հունիսի 14-ի N 12/8-22-4298 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 7-ի N 17223/3-6 եզրակացությունները, որ ո շ ու մ է.

1. Սահմանել, որ Շվեյցարիայից՝ բժիշկներ Հելստաբի և Հայդենի կողմից որպես նվիրատվություն «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բժշկական սարքավորումը (իր լրակազմով՝ մեկ տեղ, 8 կգ ընդհանուր քաշով, 5283.80 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 57.15 եվրո, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առաջնային պահպանմանը և բժշկասոցիալական ծրագրերի զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՍՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ-372-Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄ-  
ԲԵՐԻ 11-Ի N Մ-851-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ  
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ  
(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2010 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-1/3924-10 և Հայաստանի Հանրապե-  
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի  
հունիսի 8-ի N 17537/3-4 եզրակացությունները, որ ո շ ու մ է.

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00057312)  
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված  
է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնա-  
դրամի կողմից իրականացվող «Ձեյթուն - բարեկարգում» ծրագրի մասին» N Մ-851-Ա  
որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանա-  
կություն:

«Բրիտանիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02536427) 2010 թվականի մայիսի 19-ին կնքված՝  
NB-19/05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական  
ապրանքների ձեռքբերում՝ 750000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտ-  
ների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մայիսի 2010 թվականի N Մ - 371 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ  
14-Ի N Մ-287-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ  
Մ Ա Ս Ի Ն


(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2010 թվականի հունիսի 2-ի N 3/3.8-1/3644-10 և Հայաստանի Հանրապե-  
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի  
հունիսի 3-ի N 16948/3-4 եզրակացությունները, որ ո ղ ու մ է.

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00057312)  
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված  
է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 14-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի  
կողմից իրականացվող «Վանաձորի «Տարոն - 3» թաղամասում 15 բնակարանի կառուցում»  
ծրագրի մասին» N Մ-287-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա  
համար ունի զգալի նշանակություն՝

«Շեն-կոնցեռն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02201344) 2010 թվականի փետրվարի 1-ին  
կնքված՝ N 02ա պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական  
ապրանքների ձեռքբերում՝ 3000000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտ-  
ների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՍՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 370 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ  
28-Ի N Մ-192-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐ-  
ԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ


(«ՍԻ Օ Էյ Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2010 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-1/3938-10 և Հայաստանի Հանրապե-  
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի  
հունիսի 8-ի N 17539/3-4 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «ՍԻ Օ Էյ Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից  
կնքված ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված  
է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովի 2006 թվականի մարտի 28-ի «ՍԻ Օ Էյ Էֆ» մանուկների բարեգործական  
հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնք-  
ների համապարփակ տնտեսական զարգացում» ծրագրի մասին» N Մ-192-Ա որոշմամբ  
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն

«Բյուրակն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ 02220595) 2010 թվականի մայիսի 18-ին կնքված՝  
N 18/05-10-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների և  
հարակից սարքավորումների ձեռքբերում՝ 4829400 դրամի չափով, առանց ավելացված  
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-  
մուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՍՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
 Ո Ր Ո Շ ՈՒ Մ


18 հունիսի 2010 թվականի N Մ - 369 - Ա  
 քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
 ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ  
 3 -ի N Մ- 228 -Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՍՏԱՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
 ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում  
 ՄԻԱՎՉԻԱԳ-ի դեմ պայքարի ազգային ծրագիր») (4)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
 կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
 նախարարության 2010 թվականի հունիսի 1-ի N 3/3.8-2/3593-10 ու Հայաստանի Հանրա-  
 պետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի  
 հունիսի 4-ի N 17139 /3-6 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության  
 մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն պետական ոչ առևտրային կազմա-  
 կերպության (ՊՈԱԿ) հասցեով Հնդկաստանից ուղարկված բեռը (դեղորայք՝ Ձիդոլուդին 1 տեղ,  
 (101 տուփ) 8 կգ ընդհանուր քաշով, 757,5 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը  
 կազմել են 29200 հնդկական ռուփի (570.56 ԱՄՆ-ի դոլար), «Արարատյան» տ/մ) ներմուծվում է  
 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման  
 հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎՉԻԱԳ-ի  
 դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին N Մ-228-Ա  
 որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
 րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-  
 տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՍՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 368 Ա  
քաղ. Երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի  
N Մ-029-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ  
(«Արմենակ և ԱՆՆա Թաղէոսյանների անվամբ բուժարան»)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 10-ի N3/3.8-1/3930-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 8-ի N17536/3-4 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Արմենակ և ԱՆՆա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 02592526) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի «Արմենակ և ԱՆՆա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոշ գյուղում պոլիկլինիկայի կառուցման» ծրագրի մասին» N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05502622) 2010 թվականի մայիսի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնական շինարարական աշխատանքների կատարում՝ 588587869 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 367 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ  
15-Ի N Մ-306-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-1/3925-10 ու Հայաստանի Հանրապետության առավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 8-ի N 17542/3-4 եզրակացությունները և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2010 թվականի մայիսի 27-ի N 880 գրությունը, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 15-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին և ներտարածքային էլեկտրամատակարարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-306-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) որոշման 1-ին և կից ծրագի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «162539910 դրամ» բառերը փոխարինել «195782180 դրամ» բառերով.
- 2) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում «128750450 դրամ» բառերը փոխարինել «161992720 դրամ» բառերով.
- 3) ծրագրի 6-րդ և 9-րդ կետերում «մինչև 31 դեկտեմբերի 2009թ.» բառերը փոխարինել «մինչև 20 սեպտեմբերի 2010թ.» բառերով՝ հիմք ընդունելով 14.05.2010թ. կնքված N 2 եռակողմ համաձայնագիրը (կցվում է):

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱՍԱԳԱՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

✓



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵՔՐՈՇԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
18 հունիսի 2010 թվականի N Ս - 366 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՔՐՈՇԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՒՏՈՒՄԻ  
14-Ի N Ս-579-Ա ՈՐՈՇԱՆՍ ԵՎ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ  
ՊԿՏԵՄԵՐԻ 9-Ի N Ս-722-Ա ՈՐՈՇԱՆՍ ԵՎ ՓՈԹՈՒՄՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(\*Հայաստան» համախալկական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2010 թվականի հունիսի 4-ի N ՅՅԾ-13709-10 ու Հայաստանի  
Հանրապետության կառավարության ազդեցիկ պետական եկամուտների կոմիտեի 2010  
թվականի հունիսի 3-ի N169453-4 եզրակացությունները, որոնք նախատեսում է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստան» համախա-  
կական հիմնադրամի կողմից իրականացվող «ՀՀ Տափուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի  
«Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիմնադրում» ծրագրի մասին» N Ս-579-Ա (2009 թվականի  
դեկտեմբերի 11-ի NՍ-835-Ա որոշման խմբագրությանը) որոշման մեջ և կից ծրագրում  
կատարվել հետևյալ փոփոխությունները:

1) որոշման 1-ին կետում և կից ծրագրի 5-րդ կետում «166300911 դրամ» քառերը  
փոխարինել «283863841 դրամ» քառերով:  
2) որոշման 2-րդ կետում և ծրագրի 9-րդ կետում «162800911 դրամ» քառերը  
փոխարինել «280298841 դրամ» քառերով:


3) որոշմանը հաստատված ծրագրի 7-րդ կետում «2010թ հուլիսի 06-ը» քառերը  
փոխարինել «2010թ նոյեմբերի 30-ը» քառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապե-  
տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009  
թվականի օգոստոսի 14-ի N Ս-579-Ա որոշման հաստատված ծրագրին հարավից գործարքի  
մասին» N Ս-722-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «970000 դրամ» քառերը փոխարինել  
«1370000 դրամ» քառերով:

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «1550000 դրամ» քառերը փոխարինել  
«2195000 դրամ» քառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րության և Հայաստանի Հանրապետության կառավարության ազդեցիկ պետական եկամուտ-  
ների կոմիտե:



ԱՌԽԱԳԱՅՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


18 հունիսի 2010 թվականի N Մ-365 -Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N Մ-446-Ա  
ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական  
մասնաճյուղ )

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2010 թվականի մայիսի 25-ի գրությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հունիսի 2-ի N 3/3.8-1/3643-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունիսի 3-ի N 16947/3-4 եզրակացությունները, ո Ր Ո Շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 3-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից 2009-2010 թվականներին իրականացվող դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-446-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2010 թվականի հունիսի 1-ը» բառերը փոխարինել «2010 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի N Մ - 364  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ  
4-Ի N Մ-341-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(«Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների»  
հիմնադրամ)


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ  
ընտանիքների» հիմնադրամի 2010 թվականի հունիսի 16-ի N 11 գրությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ է .*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-  
մակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի  
բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման» ծրագրի  
մասին» N Մ-341-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախագծի 1-ին կետում «259 տեղ, 4957 lbs քաշով» բառերը փոխարինել  
«265 տեղ, 5620 կգ քաշով» բառերով.

2) որոշման կից բեռի և բաշխման ցանկը կարդալ նոր խմբագրությամբ (ցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-  
թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրա-  
պետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրա-  
պետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության  
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ






«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի»  
անունով ԱՄՆ-ից ուղարկված 265 տեղ, 5620 կգ բրուտո քաշով և 56 100 ԱՄՆ  
դոլար արժողությամբ բեռի ցանկը

h/h	Ապրանքի անվանումը	Տեղերի քանակը	Չափ	Քաշ բրուտո կգ	Քաշ նետո կգ	Արժեք	Ծագման երկիր
1.	Գրենական պիտույքներ	68		617	583	11460	Չինաստան
	մատիտի սրիչ		2720		39	544	
	մատիտ		6528		49	650	
	գրիչ		3264		26	490	
	ռետին		10880		6	400	
	մկրատ		1224		20	1224	
	ջրաներկ		408		19	900	
	հաշվիչ		272		46	1460	
	ուսապարկ		780		350	5500	
	տետր		480		12	136	
	ֆլոմաստեր		408		11	104	
	գրչատուփ		120		5	52	
2.	Աքսեսուար	2	70	16	15	249	Չինաստան
	ծածկոց		4		3	40	
	սրբիչ		66		12	209	
3.	Օգտ.հագուստ	173		4789	4700	42223	ԱՄՆ
4.	Բուժ պարագա	1	4	11	11	210	ԱՄՆ
	հենակ		1		1	30	
	անվավոր սայլակ		2h		8	130	
	մանեժ		1h		2	50	
5.	Մանկական գրքեր	5		28	26	580	ԱՄՆ
6.	Երեխայի մահճակալ	1	1	16	16	20	ԱՄՆ
7.	Մահճակալի ներքնակ	1	1	5	5	20	ԱՄՆ
8.	Տոնածառ օգտ.	1	1	7	6	3	Չինաստան
9.	Ջամբյուղ երեխայի	1	1	9	8	20	Չինաստան
10.	Մեծահասակի տակդիր	9	117	96	92	365	ԱՄՆ
11.	Անկողնու տակաշոր	3	315h	26	25	950	ԱՄՆ
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>265</b>		<b>5620</b>	<b>5487</b>	<b>56100</b>	







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունիսի 2010 թվականի N Ս - 363 - Ա

(Որոշումն ընդունվել է 2010 թվականի հունիսի 4-ին)  
քաղ. երևան

**«ՎՈՐԼՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱ-  
ԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԳՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՆԱԿՈՑ ԵՎ ՇԱՄԲ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ»  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2010 թվականի մայիսի 17-ի N 3/3.8-1/3047-10, Հայաստանի Հանրապե-  
տության արդարադատության նախարարության 2010 թվականի մայիսի 17-ի N 1193-10,  
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2010 թվականի  
հունիսի 14-ի N 01/13.2/2214-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առըն-  
թեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 14-ի N 14738/3-4 և  
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի մայիսի 18-ի  
N 01/1098-10 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական  
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս  
Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755) իրականացվող՝ 6356364 դրամ ընդհանուր արժողությամբ  
«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Բոնակոճ և Շամբ համայնքների մանկա-  
պարտեզների մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակեր-  
պության հայաստանյան մասնաճյուղին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում  
մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատ-  
ճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի  
Հանրապետության ժողովրդի համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող  
ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի  
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-  
